



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 10

— ՏԵՄԱԲԱԹ —

4 ՄԱՐՏ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՒԱՌԱՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղրշ.	Տարեկան	54 Ղրշ.	Տարեկան	42 Ֆր.
Վեցամսեայ	25 .	Վեցամսեայ	27 .	Վեցամսեայ	6 .

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մ Շ Ս Վ Ս Ժ Ս Ո Ս Տ Ո Ր Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պէյ խանին ռակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՋԵՆԻԹԸ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնը անմիջապէս կը կատարուին գումացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՋԵՆԻԹ ժամացոյցները Բաքիյի 1900 Արուեստամանդէսին մէջ ամենեւ ինքրորդ պարգեւին արժանացած են:


Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՅԻՐ — ԱՐՄԷՆ ԱՌԽԱՐԵԱՆ

(آ.آ.آصاوریان) شرکت مرتبه مطبعه سی — باب عالی جاده مستندة نو مبرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՏՆՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Գապը-Այի ճառսէսի թիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի միայն,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անվիւր և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԺ. ՓԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարի լազործուածը,
հաստատունը եւ գերագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գէշէ:

Սինկերի մեքենաները կը ծախոյն մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

Սինկերի մեքենաները

- | | |
|---------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրուի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկերի խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյաշիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Չարշը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու թոյր ֆաշաֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզզուլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԺ. ԹԱԳ. ԱՌԱՆՋՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱՐ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեսի գումար

31,008,000 ԴՐԱՆՔ

ՀՐԻՆՋԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեսի գումար

17,000,000 ԴՐԱՆՔ

ՖԷՆԻՔՍ լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

ՖԷՆԻՔՍ լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ չոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ԲՐԷՏԻ ԼԻՍՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 14—16 .

Ընկերութիւնն՝ կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիւզօր Երկաթագոյնի
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻՒ 10

ԾԱԲԱԹ

4 ՄԱՐՏ 1906

Ե Ռ Ա Չ Ա Յ Ն Ը

ԱՆՀՐԱԺԵՇՏԸ ՏԵՂԻ ԿՈՒՏԱՑ ՀԱՃԵԼԻՒՆ

Գեղարուեստին բոլոր ճաշակներուն մէջ հետզհետէ փափկութեան, տակաւ կատարելութեան կողմնակից և ջատագով չլըւալը ինքնին անըմբռնելի պիտի ըլլայ բոլոր անոնց քով, որոնք պատահաւ թիւնը կ'ունենան Գեղարուեստին պաշտելութիւնը դիտելու, կարգաւոր անով հետաքրքրուող և անով իրենց մտաւորական սնունդին կարեւոր մէկ մասը գոհացնող հասարակութիւններուն մէջ:

Բայց... անտանելի և անխուսափելի բայց... ը:

Եռաձայնի ժխոր մըն է կ'արձագանգէ մայրաքաղաքիս և գաւառներուն ամէն անկիւններէ լրագրի սինակներուն մէջ, թեր ու դէմ, այսինքն նպաստաւոր և աննպաստ: Գլխաւոր թաղերը զիրար գլելու փորձեր

կ'ընեն յառաջիկայ տօնական օրերուն մէջ եռաձայնով պատարագի փորձեր կատարելու, երաժշտական խումբեր կը կազմուին, և մրցումի խանդը կը մտնէ անոնց ամէնուն մէջ, անորակելի ուժգնութեամբ: Հին Մէհտէրեան մը, որ նոր Զիլին կիրեանի մը եռաձայնական կուսակցութեան հակառակորդ մըն էր, փութոյ պնդութեամբ գործի սկսած է, և Զատկի Երբորդ Միաշարաթին պիտի տեսնէք թէ Մայր եկեղեցիի կամարները երբեք ա'յնքան թըրթռուն զեղգեղանքներով թնդացած են, պիտի տեսնէք թէ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչը ո'րքան պիտի անշքանայ Գում-գարուի Ս. Սատուածածիին քով, և Զիլինկիրեան ի'նչպէս նպատակ ին պիտի խոստովանի Մէհտէրեանին առ-

ջեւ : Սանկ բաներ մըն են որ , ըսելիք չկայ : Երաժշտութիւնը հրապօր կամ խայծ մը ծառայեցնելու է քարեպաշտութեան : Գովի ի եռանգ , մանաւանդ ներկայ միջոցիս՝ ուր կը կարծուի թէ համակիր բարեպաշտութիւն մը շահիլ պէտք է վերջապէս եկեղեցիները և եկեղեցականները սիրցնելու համար : Չէ՞ մի որ կրթական Ծրագիրը վերաքննութեան ենթարկեցինք , և երկու տարի է ի վեր կրթական ջանադրութեան ուսումնական մըն է մէջտեղ նետեցինք :

Եռաձայնը թո՛ղ ըլլայ գովի ի նորութիւն մը , մանաւանդ մեր երաժշտասէր հարուստ գաղափարներ համար , որուն երաժշտական ճաշակը ա՛յնքան նրբացած է իր գիւրակեցութեան և զբօսասէր հակումներուն հետեւանօք : Ասոր վրայ աւելցուցէ՛ք նաև այն գիւրութիւնը զոր ունի նոյն գաղափարը վարձատրելու համար բակին մէջ եռաձայնի նորացուցիչները : Ասոր ըսելիք չունինք :

Բայց մեր նորասիրութեան և նորավարժութեան մեղութիւնը այս եռաձայնի խնդիրը անանկ մը նկատեց թէ եկեղեցասիրութիւնը ասով կը բուժուի մեր մէջ : Այլ եկեղեցիները պիտի լեցուին հաւատացեալներու խումբ բաղմութեամբ , ա՛լ պիտի քրտնին եկեղեցիին պատերը , որովհետեւ Ղալաթիոյ Ս. Լուսաուորիչին պատերը քրտնեցան նոյն օրը , և Ս. Աստուածածինին պատերը պիտի քրտնին Զատիկին երրորդ իրակին :

Բայց պատերը ինչո՞ւ եռաձայնով երգեցողութեան առթիւ միայն քրտնեն : Պատարագի արարողութիւնը քրիստոնէական-տիեզերական արարողութիւն մըն է , և Կ. Պոլսոյ քրիստոնէայ հայ համայնքը տակաւ եկեղեցի

լսելով պատարագը միայն կը հասկնայ , անոր միայն ներկայ կը գտնուի , և այս պատճառաւ զայն հետաքրքրական և ակսորժելի ընծայելու համար այսօր եռաձայն , վաղը քառաձայն : Դիւրբմբռնելին կատողութիւններ ասոնք ամէնքն ալ : Սակայն , իրօ՛ք , ա՛յ ըլլալու է մեր միակ նախանձախնդրութիւնը եկեղեցական բարեգարգութեան համար : Հարցուցած փնտռած ունի՞նք արդեօք թէ առաւօտեան և երեկոյեան ժամերգութիւնները ի՞նչպէս կը կատարուին մեր եկեղեցիներուն մէջ , քանի՞ քահանայ ներկայ կ'ըլլայ , քո՞նի՞ դպիր կը մասնակցի երգեցողութեան , և ներկայ Մեծ-Պահոց օրերուն Արեւագալի երգերը ի՞նչպէս կը կարգացուին եկեղեցիներուն մէջ , բաց ի այն շաբաթական օրերէն , որոնք իւրաքանչիւր եկեղեցի ուխտաւորական օրերը նկատուած են :

Ուշագիր եղած ենք միօրինակ երգեցողութեան , միօրինակ արարողութեան կարգ ու սարք հաստատելու եկեղեցիներուն մէջ : Բարեկենդանի շաբթուան եկեղեցական տօներու համար նախատեսակ կ'ըլլայ , աշակերտները և աշակերտուհիները ըստ եկեղեցական հնաւանդ սովորութեան կարգաւ եկեղեցի կ'առաջնորդուին մասնակցելու երգեցողութեան , և իրենց կրօնքին սրբազան աւանդութիւնը գործնականապէս ուսանելու :

Եռաձայնը հաճելի չէ՞ , և մեր ըսածները անհրաժեշտը չե՞ն , կը հարցնենք :

Կը յուսանք թէ նորութեան եռանդը բաւական երկար ատեն կը մնայ սա՛ եռաձայնին վրայ , և եկեղեցասիրութիւնը չոյելու նոր պատրուակ մը չի փնտռուիր նուազ անհրաժեշտ ալ առաւել հաճելի նորոյթներու մէջ :

ՔՐՈՆԻԿ

ԿՈՒՏԷՆՊԵՐԿԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Կիրակի օր, ժամը ... անորոշ:

Թեւթոնիայի ...

Այո՛, եթէ չեմ սխալիր ձեռքիս յայտա-
դիրը կ'ըսէ թէ՛ նոյն օրը այդ Գերման հաս-
տատութեան հաստ պատերէ շինուած, ըն-
դարձակ սրահներուն մէջ տեղի պիտի ու-
նենայ աշխարհիս մէջ նմանը չտեսնուած
նուագահանդէս մը, որ պիտի վերջանայ
խղթախ սօքրոխով մը կամ անգլիերէն կար-
գալով այս բառը, սոյրառիով մը:

Եւ ահա ի լուր այս վսեմ, բարի եւ գերբ-
նական հսկայահսիւն, մայրաքաղաքիս մէջ ան-
կիւններէն նոյն օրը Պօլլուղանի տանձե-
րու պէս հոն թափիլ կը սկսին բոլոր
այն ցատկեմէի մարդուկները, եւ ոսկերչի ու
պատմաճիւղի աշխերաները, որոնք տարին 365
օր ինձե՛ս ազ մտիկ կ'ընեն, մեկն կը կան-
չեն, հօշաւտայիտը կը մոլտան, ճամբան քա-
ղած ատեններն բիրէներու պէս կը ցատկըռ-
տեն, թաշկինակի տեղ երկու մատներնին
կը գործածեն, գօնսէ՛րը, գօնսէ՛րով կը հաս-
կընան եւ փոխադարձաբար, պահք կը բռն-
են եւ այդ մէկ օրը կերթան Թեւթոնիայի
սրահը, յագեցնելու համար իրենց երաժշ-
տական պապակը, ունկնդրելով Մօզարթէն,
Մէնտելլան, Վէնտիէն, Մասսընէն, Պէ-
թօվէնէն կտորներ:

Ինչպէս ըսինք Կիրակի օր է:

Ներս կը մտնամ Թեւթոնիայի դուռնէն եւ
լուսափառ նրբանցքէ մը անցնելով վեր կե-
լեմ սանդուխէ մը եւ ... հո՛ր ինքզինքս
կը գտնեմ սրահի մը մէջ, կամ աւելի սրա-
հին դռան մէջ:

Այդ մեծ սրահին, մեծ դռան վրայ վայր-
կեան մը աչքերս կը գոցեմ ու կը կենամ:
Շլացուածի պահս էր եւ աչքերս անվարժ այդ
տեսակ ճոխ ու այլազան համադրութիւն-
ներու, դեռ երկար միջոց մը գոց պիտի
մնար, եւ ես հիացկոտ պիտի մնայի իմ այդ
տիկին Ղովտի դիրքիս մէջ, եթէ սանդու-
խէն վեր ելող պարոն մը, որ Սամաթիայէն
ճամբորդած էր մինչեւ հոդ, ահաւի բը-
տոնցքի հարուածով մը — ոչ կամաւոր բը-
ճականաբար — մէկ կողմ չը հրեր ինծի, քա-

մակիս ոսկորը կտորելու հաւանականու-
թեանը առջեւ դնելով պահ մը ինծի:

Բազմութիւնը հիանալի էր, եթէ երբեք
անպատճառ պէտք է որ Թեւթոնիայի սրա-
հին մէջ գտնուող բազմութիւնը հիանալի
ըլլայ: Երկու սեռն ալ, տէր բայինքովը,
սեփականներով եւ սեռի խնդիրներով մէկ-
տեղ, գրաւած էր ամբողջ ամթոռները եւ
սկսած էր ... սրտերու գրաւման:

Մասնաւոր տեղ մը կը գրաւէր արհես-
տագէտ դասակարգը, որ փութացած էր
քաջաբերել մանուկ արուեստագէտները:

Մարդիկ կային որոնք պէպէտքով եկած
էին, ուրիշ մը իր 75 տարեկան մեծ մայրը
բերած էր, մէկը իր նշանածը եւ նշանածին
բարեկամուհին, եւ այդ բարեկամուհիին
բարեկամը, ուրիշ մը մէկ տոմսակով քոյրը,
մայրը, գուգեհը, գուգիհը, զբաղիւն աղջիկը,
զբաղիւն աղջկան մէկ բարեկամուհին եւ տա-
կաին բեռնակառք մը լեցնելու չափ հետե-
ւորը բերած էր: Գիրուկ մարդ մը ... ինք-
զինքը միայն կրցած էր բերել: Վերջապէս
ամբողջ Գում-գարուն ու Սամաթիան, Գում-
գարունի զուրան ու Կէտիկ-փաշան հոն զըր-
կած էին իրենց պահեստի սուլունները, զէվ-
զէկները, ազլամձիւները, որոնք ո՛հ գացած
էին իրենց անկիրթ ճաշակը ... կրթելու
համար:

Ափերի՛ւմ Կոլտէմպերկ եւ պռավօ՛, եթէ
կուզէք. որսվ՛նտեւ ինչ մեղքս պահեմ, ես
մինչեւ այսօր Պ. Կոլտէնպերկը կը ճանչնայի
իրբու միւզիկսիէն, բայց վա՛յ ինծի, Պ. Կոլ-
տէնպերկ վարժապետի խմբս ալ ունի եղբր
իր մէջ, եւ եթէ Ուսու՛մ. Խորհուրդը խելք
ունի թիչ մը առաջիկայ դպրոցական տարե-
շրջանին Պ. Կոլտէնպերկը կը կոչէ ի վար-
ժապետութիւն, քանի որ մեր մէջ ճաշակ-
ները, որոնք այնչափ անկիրթ են պէտք
ունին ... կրթուելու:

Դառնանք սակայն նուագահանդէսին, որ
տեսակին մէջ եզակիան եղաւ, ոչ թէ որով-
հետեւ ես բան մը հասկցայ նուագուածնե-
րէն, այլ որովհետեւ չափազանց շատ էր թի-
ւը ... հասկցողներուն: Միայն անոնց քով
կենտրոն կարեւի էր գաղափար մը կազմել
նուագին եւ նուագողներուն վրայ:

Վարագոյրը բացուեցաւ եւ ի մէջ այլոց
Պ. Նուպար Թնկրեան երեւաց եւ թովեց, յա-
փըշտակեց վերացուց, զգլխեց ամբողջ սը-

րահը, եւ ներկաներէն մէկ քանիին ալ մեծաձայն յօրանջել տուաւ:

Ու այդ կտորին նուագումէն վերջ ծայր տունին հիացիկ մրմունջներ:

— Ո՛հ, պռավօ՛, պռավօ՛, պռավօ՛:

— Աֆէրիմ պէ՛:

— Պռավօ՛:

— Կեցցէ՛, պիր տահա վուռսուն:

(Ծափեր, ոսկահարութիւններ եւ սուղիչաձեւ ձայներ)

— Ի՛նչ հիանալի նուագեց, կատարեալ արուեստագէտի մը շարժումներն ունի եւ տե՛ս Հերմին, քիչ մը չը յիշեցներ այն մանկատի գերման արուեստագէտ Ֆլոռիցէն, որ անցեալ տարի նուագեց Բըթիլանի մէջ:

— Ո՛հ, Quel geste.

— Quelle, genie.

— Հէփշո՛ւ ...

— Պոյըդ սիրեմ ... հէփշո՛ւ.

— Quel talent.

— Մատներդ ուտեմ հէմէն ...

— Tiens. Նինի. c'est admirable. c'est charmant. c'est exquis.

— Քա՛ թագուկ, մեր պզտիկն ալ սա՛ Կուլտէնպէսկին քով դնենք. պէթի մարդ կըլայ, նայէ՛ սա տղան ինչ պիշիմով կը չալէ կոր ...

Ծանկարծ մէկը, Օգսէնիկ մը անպատճառ, խօսքը ուղղելով 16 ժամ անդին նըստող Գուժ-գարուցիի մը, կը պօռայ.

— Կուպեռնիկ, հիանալի տիր, c'est enlevant... (վերացնող):

Այս վերջին Ֆրանսերէնաձեւ հիացիկ ասացումաձեւը, որ գիւտ մը մըն էր պարզապէս եւ Գուժ-գարուցիի մը վայել գիւտ մը, ծայր տուաւ քրքիջներու:

Դադարի միջոցին այդ բոլոր Սամաթիացիներու եւ Գուժ-գարուցիներու բազմութիւնը պիւֆէն անցաւ: Երկու հոգի մօտեցան կառսօնին եւ կարծելով թէ հոգ ճաշարան է, քիչ մը փիյազ շինել ապսպրեցին եւ չիջ մըն ալ օդի ուզեցին:

Բայց ամբողջ այդ բազմութիւնը ուրիշ բանի կսպասէր, պար կար. ահա՛ կարեւորը. ահա՛ պիտանին. ի՛նչ նշանակութիւն ունէր Մոցարթին ու եւ է մէկ սօնաքը կամ Լէօն Գաւալլէօսի պէռուօզը, պար պէտք էր, ջանա:

Ու հասաւ բաղձացեալ ժամանակը:

Նշանը տրուեցաւ եւ սկսան պարերը, վալս, բօլքա, քատրիլ, քոեյոյ բօլքա, մազուրքա, կավօթ վալս, քէքուօլք, մաշիչ, բասը քաթո, լանսլյէ, բա տը բաթինէ, որոնք ամէն բանի կը նմանէին բացի պարէ: Երեւակայեցէք մարդիկ, որոնք լաստիկով բալլթօյով եւ հովանոցով վեր ելած էին եւ կը պարէին ալ:

Ժամը չեմ գիտեր քանին էր, երբ բազմութիւնը տակաւ քակուիլ սկսաւ ու այդ Սամաթիացի եւ Գուժ-գարուցի տղարիկները մեկնեցան, ինքզինքնին մեծցած, եւ միսթարած զգտլով:

X

Մոռցայ սակայն ըսելու թէ՛ նուագահանդէսին ներկայ չէի:

ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԲ ԵՌԱԶԱՅՆԻ ՄԱՍԻՆ

ԱՌ ՏԵՐ ՍԵՐՈՎԱԲԷ ՔՀՆՑ ՊՈՒՐՄԱՅԵԱՆ

յՍ.ՏԱՐԱԳԱՐ

Կարդացինք առաւօտեան թերթի մը մէջ Ձեր եռաձայնի մասին գնահատութիւն մը խորագրով գրածնիդ, ուր գնահատելէ, գովելէ, սքանչանալէ զատ՝ խել մը բաներ ալ կ'ըսէիք, որոնք եթէ ըսած չ'ըլլայիք՝ բան մը ըսած չէիք ըլլար, քանի որ արդէն ըսածնիդ ալ բան մը ըսած ըլլալ չէր, նախ կ'ըսէք թէ՛ Երեքշաբթի օրուան Երգեցողութեան համար ազնիւ կամ անազնիւ քրննադատութիւններ պիտի կարդանք թերթերու մէջ, որոնք թեր ու դէմ գիտցածնին ու չգիտցածնին պիտի գրեն, մենք քննադատութիւնը կը հասկնանք ինչպէս որ պէտք է հասկնալ, եւ որուն արդէն ազնիւ ածականը աւելորդ կը գտնենք, սակայն Երեք չենք հասկնար անազնիւ քննադատութիւնը, որն որ արդէն գինք հիւրնկալող թերթ մ'ալ չի գտներ, դուք չէք կրնար ստիպել որ ամէն մարդ ունենայ ձեր ճաշակը ու սքանչացումը, այս կը ներէք, զի թերեւս ձեր սքանչացումէ վերացեալ մէկ միջոցին ըսած ըլլաք:

Նոյնպէս չենք կրնար բան մը ըսել ձեր հրապարակաւ խոստովանութեան թէ՛ մինչեւ մեծանուն վարպետին եռաձայնը, վերջին ծայր պաշտպանողական մըն էիք արեւելեան երաժշտութեան, եւ ոակայն անկէ վերջ, զգացմամբ, ճաշակով ու ամէն բանով դարձաք, գինիէ դարձած քացախի պէս, այս ալ կարելի է:

Բայց երբէք չենք ներեր ձեր սքանչացման մէջ բոլորովին մոլորած, ելնէք քննադատէք հայ եկեղ. երաժշտութիւնը, ու ողորմի՛ւ կարգաք անոր. արդեօք իբր քահանայ՝ զոհողութիւն մը ըրած կը համարիք մեր եկեղեց. երաժշտութեան ձրի ողորմիս կամ հոգւոց կարգադրւոյ: Ամենքնիս ալ գիտենք արդէն թէ՛ մեր եկեղ. երաժշտութեան խաղերը իրենց իսկութիւնը կորսնցուցած են, բայց ասկէ դար մը կամ քիչ մ'ալ աւելի առաջ, զանոնք իրենց ձեւերուն համապատասխան կարգի ու կանոնի քերով՝ եւ անկէջ ալ կէս դար ու աւելի առաջ, աւանդաբար եկած եղանակները ծայնադրող ու յարգարող լուսահոգի Պապա Համբարձումը չէ՛ արդեօք այն մեծ երաժշտական տաղանդներէն մին՝ ինչպէս են ուրիշներունը իրենց համար, կաղաչեմ է՝ աւագայն Սուրբք մը թող զմեզ այս աստիճան ուրացող մը չընէ հանդէպ անոր, փոխանակ կոթող մը կանգնելու յիշատակին:

Բան մը չը պիտի ըսենք երբէք արեւելեան երաժշտութեան մանուածապատ ձեւերուն ու խառնակ չափերու մասին գրածնուդ, այլ միայն քիչ մը պիտի խնդանք, վասն զի մենք զձեզ իբր երաժիշտ քահանայ մը կը ճանչնայինք, եւ ձեզմէ այս տեսակ յայտարարութիւն մը երբէք չէինք սպասեր, թէ՛ եւ շատեր՝ շատ բաներ կըսեն ու պիտի ըսեն, մինակ դիտել կուտանք ձեզ թէ, քանի որ խնդիրը գեղարուեստի վրայ է, քիչ մը գիտակցութեամբ խօսիք խընդուք չը պատճառելու համար:

Մինչեւ այս օրուան մեր ըսածը ու ասկէ վերջն ալ մեր ըսելիքը սա է թէ՛ ո եւ է երաժշտութեան մը բնաւ աղէկ կամ գէշը չըլլար, երբ երգուի կանոնաւորութեամբ, միայն ճաշակի խնդիրն է որ կը տարբերի մենք չըսինք ու չենք ըսած երբէք թէ՛ պէտք

չէ վայելենք զարգացեալ երաժշտութիւն մը, ոակայն պէտք է գիտնանք զայն վայելելու կերպը ու միջոցը: Երկու տարբեր ճաշակաւ երաժշտութիւններ իրարու հետ հաշտեցնելը դիւրին բան մը չը կարծուի. եթէ չէք գիտեր, գիտցէք որ եւրոպական երգի մը պատշաճ կերպով պատշաճ մը զնեն անգամ ամէն վարպետի գործ չէ, ո՛ր կը մնայ եռաձայն մը գրել, եթէ ձեր ըսածին պէս մեծանուն վարպետը ունի այդ կարողութիւնը, թող հեղինակէ ժողովրդական երգի եռաձայն հատուած մը, ու ապահով թող ըլլայ որ երաժշտական աշխարհը պիտի լեցնէ այն երանելի փառքուն դեղին մետաղները ի գըրպանս իւր:

Ահա ասոր համար է որ կարգ մը եկեղ. երաժիշտներ՝ որոնք կը հասկնան թէ ի՞նչ է եկեղ. երաժշտութիւնը, իրենց գիտցածին ու սկզբունքին վրայ հաստատ թեր ու դէմ քննադատութիւններ ըրին ու կ'ընեն, սակայն կը ցաւիմ ըսել թէ՛ այդ քննադատութիւններն ալ սխալ ըմբռնումով մը վերագրուեցան չարակամութեան ու անկարողութեան: Կը մնայ մեզ արգահատիլ Իգմիրցիներուն երաժշտական ճաշակին վրայ, որոնք չը կարողացան հասկնալ մեծանուն վարպետին արժանիքը, ու կը ցաւինք ձեր վրայ, որ այդքան շուտ բաժնուեցաք այն ինչ համը տաւ:

Վերջապէս մեր միակ փափաքը այն է որ, ժամ առաջ վերջացած տեսնելով նուիրական երաժշտութեան մը հետ խաղալը, ունենանք մեր դպրոցներու մէջ կանոնաւոր երաժշտութիւն մը, որով հետզհետէ պիտի ունենանք թէ՛ ապագային տաղանդաւոր երաժիշտներ եւ թէ՛ նոյն իսկ մեր ընտանեկան զուարճութեանց մէջ կանոնաւոր ու հաճոյալի երաժշտութիւն մը, (քանի որ այսօր մեր ընտանեկան մեծ մասին մէջ եւրոպական երաժշտութիւն ըսելով կը հասկնանք թափթփուք դաշնակ մը զարնելը, եւ կամ աֆօնօսիօնով մը մինչեւ լոյս ցատկելը), այսպէսով միայն կարելի է երաժշտական ասպարէզին մէջ յառաջդիմել ու ճաշակնիս գոհացնել, տարին երկու կամ երեք եռաձայն պատարագը զմեզ չի գոհացներ, ու միայն սիւս մը կրնայ ըլլալ:

Ես այլ եւս չունիմ ո եւ է ըսելիք, թէ՛ եւ դուք ունիք շատ ըսելիք:

Ձեր աղօթքը հայցելով
ԵՐՄՈԳ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՊՈԼՅԱՅ ՀԱՅ

ՊԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՀԱՅ-ԼԵՋԱՐԻ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐ

ԵՂԻԱԶԱՐ ՏԷՎԼԵԹԵԱՆ

եւ

ՍՐԱՊԻՈՆ ԹՂԼԵԱՆ

Հայ լեզուի երկու վաղեմի ուսուցիչներ, որոնք գրեթէ մեր ազգային բոլոր կնիքները վարժարաններուն մէջ դասախօսելէ վերջ, հիմայ գեցած ու ա՛լ խարսխած են, մէկը Պոլսոյ եւ միւսը Բերայի դպրոցներուն մէջ:

Երկուքն ալ հին դպրոցի ուսուցիչներ, այսինքն 1890 էն առաջուան, ուր վարժապետները իրարու նկատմամբ միշտ չար նախանձ մը ունէին եւ չէին ուզեր իրենց աշակերտներուն սովորեցնել իրենց գիտցածը: Այդ թուականին դեռ շատ անգամ բառերու, ասացուածքներու վրայ վիճաբանութիւններ տեղի կունենային քննութեանց պահուն, եւ ուսուցիչներ մէկզմէկ կանարգէին դասարանին մէջ, ուսանողներու առջեւ....

Տէվլէթեան ահա այդ ժամանակէն մնացած հին ուսուցիչ մըն է, խորունկ գրաբառագէտ մը, որ գրեթէ երեսուն տարիներ արդէն աշխատած է մեր կրթական յաջկերուն տակ, ու դեռ կ'աշխատի օրինակելի պարտաճանաչութեամբ մը, միշտ հոն սակայն, իր ուսուցչութեան սահմանափակ ասպարէզին վէջ:

Իր դասաւանդութեան եղանակը հին է, եւ չի կրնար նոր թռիչ մը առնել, բան մը, որ կարծես պատճառ եղած է Տէվլէթեանին թիւ մը յուսավորէպ կեցութիւն:

Բնութեամբ շատ համեստ է, բարի ու հեզահամարոյր, եւ ունի գրեթէ մասնաւոր յատկութիւն մը:

Սկիւտարի ճեմարան եւ Ա. Խաչ դպրոցներուն էն փայլուն ժամանակներուն մէջ հայերէնի ուսուցիչը եղած է Տէվլէթեան, ուրկէ անցնելով, իր խարխալը դադարեց նետա՞ն է վերջնականապէս Պոլսոյ կողմը: Ինք միշտ կ'աշխատի բայց անշուշտ, դասախօսե-

լով Գուս-գաբուի, Սամարիոյ եւ Կենի-գաբուի ազգային վարժարաններուն մէջ:

Տէվլէթեան զուարթ ու կատակախօս զանախօս մըն է, շատեր օգտուած են իրմէ, բայց այս օգտուողներուն մէջ չէ իր... քակը, որ դատապարտուած է կարծես միշտ նիհար մնալու:

Թէեւ Տէվլէթեան գրական ու բանաստեղծական հակում մը ունի կ'ըսեն, բայց ժամանակին հրատարակած է միայն քանի մը կտոր բողոք գրուածքներ, ու գրաբառ պզտիկ քերականութիւն մը, սակայն այսուհանդերձ Տէվլէթեան իրրեւ գրաբառագէտ նշանակելի գէմք մըն է մէկ մէջ, եւ իրրեւ ուսուցիչ միշտ յարգելի, քանի որ իր կարծբը չ գրեթէ երեսուն տարիներէ ի վեր միայն կը բարախէ մեր մանկաւոյն մտաւոր ու բարոյական դաստիարակութեանը համար:

Տէվլէթեանի կեանքին գրեթէ մօտիկ կեանք մը ունեցած է նաեւ հայկաբան Սրապիոն Թղլեան, որ մինչեւ այսօր կը դասախօսէ Բերայի ազգային վարժարանաց մէջ հայ. գրաբառը:

Թղլեան ժամանակին բաւական նշանակելի գրական գործունէութիւն մը ունեցած է, եւ մասնաւորապէս թատերական թափամանութիւններ, հեղինակութիւններ ըրած է, որոնք ժամանակին գրական հրապարակին վրայ պատճառ եղած են շատ մը ծանր քննադատութիւններու, անպակի որ իր այդ գործերը, պահ մը տարակոյսի մէջ ձգած են Թղլեանի ունեցած հմտութիւնը:

Ինք իրրեւ ուսուցիչ լա՛ւ ուսուցիչ մը եղած է ու դասախօսած մասնաւորապէս Սկիւտարի վարժարաններուն մէջ:

Թղլեան իր պաշտօնին մարդն է, թէեւ հին դպրոցի ուսուցիչներուն կը վերաբերի, բայց իր դասերը հետաքրքրական մաս մը ունին միշտ:

Թղլեան թէեւ տարիքով յառաջացած, սակայն իր բուն եռանդը, կարծես իր երիտասարդական կորովը կը յիշեցնեն մեզի, զի հակառակ իր գրեթէ քառասուն տարուան ուսուցչութեան ծանր ու դժուարակիք բեռը ուսերուն վրայ բարձր ըլլալուն, կը տեսնուի զիքը յանգիստ Հայտարար-բաշտ, միշտ

Երբտաստեթ, ուր կերթայ հայսերական
զինուորական բժշկական փորձարար, որուն
ֆրանսերէնի ուսուցիչն է:

X

Մտադիր ենք երկու յօդուածով ալ եւս
փակել հայ լեզուի ծանօթ ուսուցիչներու
Ա. դաստիարակը, որոնք պաշտօնի վրայ կը
գտնուին այսօր, մեր Ագգ. Կրթական յար-
կերուն տակ:

Յաջորդ թուով պիտի խօսինք հետեւ-
եալ շորս ուսուցիչներուն վրայ.

ՆՇԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

ՄԱՆԱՍԷ ՍՈՒԼԹԱՆԵԱՆ,

է. լ.

ՏԻՐԱՆ ԶՐԱԳԵԱՆ

Որոնց կենսագրական գիծերուն, ու ա-
նոնց գաղափարներուն հետ, չահեկան ա-
նեկտողներ մըն ալ պիտի հրաձգենք մեր
ընթերցողներուն:

ԼԵՒՈՆ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

Ե. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայ եկեղեցւոյ Շարականներուն
վոճմութիւնը բացայայտ է արդէն, Մեծ
Պահքի այս օրերուն մանաւանդ՝ կարե-
ւի չէ երեւակայել ըրիտանեայ մը սք
փափաք չգգայ, հոգեկան կարօտը յա-
գեցնելու, Արեւազալներով և ուրիշ
Շարականներու ընթերցումներով:
Երուանդ էֆ. Տ. Անդրէասեան ինամ-
ուած աշխարհաբարի մը վերածած է
Շարականները, երկու հատորի մէջ
ամփոփելով իր աշխատասիրութիւնը.
Ա. հատորին գինն է 2¹/₂, Բ. հատո-
րին գինը 3, երկու հատորը մէկէն
7¹/₂, զըշ. արտասահմանի համար 2 ֆր.
գաւառներու համար 9 զըշ.: Կը ծախ-
ուի Մանգումի խմբագրատունը:

ՆՈՐԹՐԻՆԱԿ ԾՊՏՈՒՄ ՄԸ

Այս տարի Բարեկենդանին առթիւ պարուն
մը, որուն ուրիշ ընկերներ ունենալը տա-
րակոյս չի վերցներ, աղջկան մը դիմակին
տակ, իբր ջնադարիս քրքակցունի Պաւս.
Փռեց յագրոյ, կոստանթնական ախտէն վա-
րակուած (պատճառ Օր. Վ. ին անկեղծ եւ
նշմարտախօս ըլլալը) իր զայրոյթին բոլոր
վայրահայտութեանք կը փորձէ խածնել օր-
նոյ մը՝ որ քաղաքագրաբար՝ մեղադրան հաս-
վերադարձի մէջ պատասպարուած ըլլալով չի
ազդուած, կ'ըսեն:

Խորհուրդ կուտան ձեզ իմաստակ թաւո-
յախօս, ձեր շանթի (ոչ, Էկոն Ս.) հար-
ուածը անտուան վերադարձել, որպէս զի
կայծակեւեմար ընկէ օր մը երբ անանց շան-
թարգելի տեսնէք զայն:

Եւ դոյն Ազնուունի փառաբանութիւն, Օր.
Էլզա եւ Օր. Եղիսաբէթ, ներեցիք համար-
ձակութեան, Ձեզ ալ յորդոր կը կարդան որ
շրջահայեաց ըլլաք. երբ յօդուած գրելու
մարմար ունիք, աւելի լաւ կ'ընէք զիս-
կան եւ կամ իմաստասիրական յօդուածներ
գրել, եւ ոչ թէ արեւելիյ նշմարտութեան մը
անցել որ օրնոյ վարդունի Մերաբէթեան
«Ծաղիկ» շաբաթաբերի 20րդ թիւին մէջ
(բացառութիւններն յարգելով ըսած եր ար-
դէն) յայտնած եր, եւ որու անկեղծ եւ նըշ-
մարտախօս գրութիւն մը ըլլալը ձեր խիղճն
ալ կը վկայէ:

Ազնիւ փոյրերս, թեւս չ'փրաւորուի ձեր
արժանապատուութիւնը, բացառութիւնները
յարգուած ըլլալուն համար. եւ նոյն իսկ
պահ մը խորհեցայ թէ՛ արդեօք կը պատշաճի՞
երկար յօդուածով մը հրապարակել ուսեալ
եւ անուս դասակարգը մտնանիշել, թայց այն
տեսն ցաւ ի սիրտ կ'ըսեմ թէ՛ մեկ մեկի
նուասացուած պիտի ըլլայիք:

Մերեմն տուանց այդ եւ ոչի ջանք չի խը-
նայեմք մեր երկաններուն կրքութեան, որ-
պէս զի օր մը ձեր գրաւածքներն իրականա-
նան, որոնք անկեղծ ալ փափաքող ենք:

Գ. Ա.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

«Տղա՛ս, անեծիս կա՛մ խրատս ըլլայ ինչի, առե՛ն քան եղի՛ր, քայց վարժապետ մի՛ ըլլաս»:

Ահաւասիկ խրատ մը, որ կէս դարէ աւելի ժամանակէ մը ի վեր կը նետուի հայ ուսանողութեան ճակտին, թէ վարժապետներու եւ թէ ծնողքներու կողմէ անխտիր:

Այս տխուր նախադասութեան քով չեմ կրնար չյիշել ճարտասանական սա գեղեցիկ պարբերութիւնը, որ կրնայ մի եւ նոյն տուն նկատուիլ վերի խօսքին բանալին:

«Ամեն քան զոհե՛ քաց ի պատիւեղ»:

Ինչո՞ւ այսքան ճիւղալիս եւ սարսափելի երեւոյթ մը տալ վարժապետութեան:

Պատասխանը շատ պարզ է: Որովհետեւ վարժապետութիւնը (ուսուցչութիւնը բառը գոնէ անաղարտ պահուի) այսօր հասած է (յարգելով միշտ բացառութիւնները) անանկ խղճալի դիրքի մը, որուն վերջը, տխուր է խոստովանիլ, կամ եէտիգուէրի Ս. Փրկիչն է եւ կամ քահանայական սեւ սքեմը:

Ասիկա ամօթ մը, նախատինք մը չէ՞ մեզի, որ Իւրդ դարուն մէջ ապրելու հպարտութիւնը ունինք, դարու մը մէջ՝ որ գիտութեան է, որ ուսման է իրաւամբ:

Պատշաճիական շրջանը շատոնց անցած է: Անիկա այլ եւս բանասէրներու ուսումնասիրութեան կը վերաբերի լոկ:

Կեդրոնական Վարչութեան պատուարժան Ուսումնական Խորհուրդը երբ մէկ կողմէ ջանքեր կ'ընէ Կրթական Ծրագիրը բարեփոխելու, ինչո՞ւ միւս կողմէ չի փութար ձեռք առնելու Զօհրապեան օրհեալ լաւելոյ, մաքրելու համար դպրոցներու անպիտաններու դարաւօ՛ր փոշին:

Ժողովուրդը մեր կրթական գործունէութեան վրայ քաջատեղեակ է, որով այս պարագան ինքնախաբուծիւն մը կ'ըլլայ պարզապէս:

Մասնաւորելով մեր խօսքը վարժապետներու վրայ, ցաւով կը յայտարարենք թէ ԶՈՒՆԻՆՔ այդ ապրանքէն:

Եթէ մէկը մեր կարգ մը դպրոցները այցելելու ծանձրոյթը յանձն առնէ, արդեօք ի՛նչ

յուսախաբուծիւններու պիտի մատնուի խեղճը, արդեօք ամօթի ի՛նչ կարմրութիւն մը պիտի ծածկէ իր ճակատը, իբր անդամը այն համայնքին որուն կը վերաբերին այդ հաստատութեանները: (Դպրոցները՝ .՞ .՞):

Բայց մենք մէկ կողմ թողլով ամէն նըկատում, մտնենք վարժարանէ մը ներս: (Որը որ ըլլայ հոգ չէ, ամէն ալ մի եւ նոյն գիրքին տպագրութիւններն են, միայն կաղմը տարբեր է):

Կարգ Գ. օրինակի համար ընդարձակ սրահ մը: Ամպիոնին վրայ, մէկը ձեռքերը ծալած, գլուխն ալ անոնց վրայ հանդէսցուցած մշիկ մշիկ կը քնանայ:

Ասդին տղոցմէ ոմանք պատուհանի մը առջեւ ժողվուած դիմացի վարդերը .՞ կը դիտեն: Ուրիշներ թուղթի կտորներ ծամելով իրարու խափա կը փակցունեն: Աւելի անդին քանի մը հագի ճաւա խաղալու զբաղած են մեծ ոգեւորութեամբ:

Մօտենանք վարժապետին:

— Միւսի՛ւ, միւսի՛ւ, արթնցիր, աղաքը նայէ ի՛նչ կ'ընեն կոր:

— Ինչո՞ւ է պէտքը, ես հսկող չեմ ա, ես գրավարժութեան ուսուցիչ եմ, օրինակը գրեցի տախտակին վրայ, թող տղաք աշխատին անոր նմանը գրել:

Ահա պատասխան մը, որուն իբր պատասխան՝ գլուխ միայն ճօճելով անցնինք ուրիշ դասարան մը:

Նորէն մարդուն մէկը նստած է անպիտան վրայ, միայն սա տարբերութեամբ որ մինչ առաջինը գլուխը ծռած կը քնանայ, ասիկա գլուխը ձիգ բռնած եւ գիրքի մը վրայ նայելով:

Քովի դասարանէն պօռալու կանչելու ձայն մը կը բարձրանայ: Հոն ալ այցելենք եթէ չձանձրանանք:

Վարժապետն է որ կրնա կտրած պոռալ կոտորուի կը պօռայ տղու մը որ իրեն նմանիլ փորձելու յանցանքը գործած էր:

Դպրոցին մէջ եթէ հանդարտ սենեակ մը կայ, այն ալ տնտեսին խանկի օճախին է ուր մարդը ժամկոչին հետ գլուխ գլխի ցած ձայնով ընտանեկան յիշատակներ քրքրելու վրայ է:

Թէեւ քապոյտներ գրելու մէջ գրիչնիս տը-

կար, բայց յուսանք թէ գաղափար մը կըրնանք կազմել մեր վարժարաններուն վրայ, ուր տղաք առտուն ժամը 12ին կը վազեն եւ ուրկէ իրիկուան ժամը 11ին վազելով տուն կը դառնան:

Հիմա այս մէկ վարժարանը բազմապատկէ Պոլսոյ թաղերուն թիւովը, վարժապետներն ալ բարձրացուր իրենց 20րդ քառակուսի արմատին, այն ատին կունենաս կատարեալ վիճակագրութիւն մը մեր վարժարաններուն վրայ, ուրկէ շատ բան պիտի հասկնաս:

Եզրակացնելով մեր խօսքը, անգամ մըն ալ կ'ըսենք մեր դպրոցները կը կարօտին Զօհրապեան օրհնալ ԱԻԵԼԻՆ: Անիկա միայն կրնայ մաքրել դպրոցի այս փտութիւնները: Նոր ու թարմ կրթական ուժեր դնենք այդ փտածներուն տեղը:

Թո՛ղ կարող անձեր բարձրացնեն վարժապետութեան այս ինկած ասպարէզը:

Բայց, պիտի աւարկեն դպրոցի վարիչ մարմիններ. կարող ուսուցիչ մը լեցուն ամսական կը պահանջէ:

Կը սխալին երբ այդպէս մտածեն: Դըպրոցական պիւտճէն 10, 30-100 ոսկի, ինչ որ է, փոխանակ քսան, քսանը հինգ հոգիի վրայ բաժնելու թող բաժնեն տասը կամ աւելի պակաս անձի վրայ:

Ասով ըսել կուզենք թէ փոխանակ դըպրոցի մը մէջը ամէն ուրիշ իր ուրոյն ուսուցիչը ունենալու թող տասը կամ պակաս ուրիշ մէկ ուսուցիչ ունենայ:

Եւ արդէն արդի մանկավարժութիւնն ալ այդ միայն կը պահանջէ նախակրթարաններու համար, որոնց վրայ է մեր խօսքը:

Այսօր Պոլսոյ մէջ կան վարժարաններ, որոնք հայերէնի համար ունին 4 ուսուցիչ, օսմ. համար 3 ուսուցիչ, Ֆրանսերէնի համար 4 ուսուցիչ եւլն. եւլն.:

Ուրիշ խնդիր մըն ալ, կամ աւելի եւս առարկութիւն մըն ալ:

Ո՛ւր գտնել կարող ուսուցիչներ:

Նախ ըսենք թէ ուսուցիչ մը կարող ըլլալու համար պէտք է համալսարանական դաստիարակութիւն ստացած ըլլայ: Բայց որովհետեւ գրեթէ անկարելի է ասիկա մեզի համար, գոնէ երրորդական կրթութիւն մը առած ըլլայ:

Պոլսոյ մէջ ունինք երկու երկրորդական վարժարան. Կեդրոնականը եւ Պերպերեանը: Ասոնք լի ու լի կը բաւեն մեր կրթական պէտքերուն:

Կեդրոնական վարժարանի բարձրագոյն կարգերը (ecoles normales) ի բնոյթ մը ունին այսօր, չնորհիւ Ս. Պատրիարք Հօր եւ Խընամակալութեան գովելի ջանքերուն: Զեռընհասութիւնը անվիճելի մանկավարժէ մըն ալ կը մարզուին մանկավարժութեան մէջ:

Այս երկու կրթական բարձր հաստատութիւններու շրջանաւարտներէն տարին 4-5 հոգի բաւ է նոր զարկ մը տալու վարժապետութեան այս աննախանձելի վիճակին:

Եւ չենք կարծեր որ այդ շրջանաւարտներն ալ ատանկ վսեմ պաշտօն մը մերժելու անազնուութիւնը ունենան, քանի որ գոհացուցիչ եւ վճարումը վստահելի ամսական մըն ալ կայ գործին ծայրը:

Ուրախ ենք որ Կեդրոնականի շրջանաւարտներէն ոմանք անձնուիրաբար Ղալաթիոյ նախակրթարանի քանի մը դասերը ստանձնած են:

Գործին մօտէն գիտակ ըլլալով, լաւ արդիւնք մը տալ սկսելուն կը վստահացնենք ընթերցողները:

Անփորձութիւնը չի կրնար իբր առարկութիւն եւ փաստ առաջ քշուիլ, քանի որ առածը կ'ըսէ իրաւամբ.

« Խեղճը տարիսին վրայ չէ, այլ գոյուց մեջ է »:

ԳԱԼՈՒՍՏ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ

Ք Ա Ս Ի Մ Ի

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԸ

Ս. Գրիգոր Նարեկացիի այս հոգեշունչ մատեանը, որուն ամբողջութիւնը գրաբար բնագիրէն հասկնալի ու մաքուր աշխարհաբարի մը թարգմանած է Քասիմ, Մեծ Պահքի առթիւ կը յանձնարարուի ամէն Հայ քրիստոնէի որ գիտէ վայելք զգալ հոգեկան հաճոյքներով: Կը ծախուի Մանգումեի Խըմբազրատունը մէկ արծաթ մէճիտ գինով, գաւառներէ փօսթի ծախք չի պահանջուիր. արտասահմանի 4.50 ֆր.:

ԴԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Ժողովարանի նախագահության

Կոստանդնուպոլսի

Այս նախապաշարման ծագումը չափ հին է, եւ հրէական ծիսական արարողութեանց մէջ փնտաւրու է անոր մեկնութիւնը: Ըստ հրէական սուանդութեան, գետին ինկած եւ չկոտրած գաւաթ մը շարագուշակ նշանակութիւն ունի: Հրէից պսակի արարողութեան ատեն, բարունապետը ձեռքին գաւաթը գետին կը նետէ ու ժգնօրէն, եւ ներկաները ամուսնացելոց ապագայ երջանկութեան կը վերագրեն եթէ գաւաթը ամբողջովին կոտրի, հակառակ պարագային, նորապսակ տանիքը ամուսնական դժբախտ կեանք մը անցնելու գատապարտուած են:

Այս սովորութիւնը նախապէս տարածուեցաւ հին լատինացեաց մէջ, որոնք իրենց կարգին ուրիշ ազգերու փոխանցեցին զայն:

Սկզբունքով, հրէական այս ձեւակերպութիւնը կը նշանակէ թէ ինչպէս որ կոտրած գաւաթը անկարելի է իր նախնական վիճակին վերածել, այնպէս ալ անհնար է մարդոց լուծել երկու էակները իրարու միացնող ամուսնական կապը, որ պսակի արարողութեամբ կը նախագործուի:

Ժողովրդական նմանօրինակ նախապաշարումները անմիջապէս հանգամանք մը ունին եւ ձաքում առած են շնչին բաներու կարեւորութիւն տալէ: Միւս կողմանէ, այս փառաբանութիւնը անմեղ չքմեղանք մըն է ապիկարներու համար, մի եւ նոյն ատեն մը խիթարական պարագայ մը՝ կոտորուած առարկային պատճառած նիւթական վնասին:

X

Թափած աղանձը

Եթէ սեղանի մը աղամանը դիպուածաւ թափի, պէտք է, ըստ աւելորդապաշտութեան, դանակի մը բերանին վրայ թափուած աղին մաս մը առնելով, ձախ տսին վրայէն հեռուն նետել, չիթ ունքին տակէն քանի մը բառ մը փնջելով:

Ինչ որ ալ ըլլայ այս նախապաշարման արեւմտիկ կամ սկզբնապատճառը, տեղա-

րանայի է թէ աղը կարեւոր դեր մը ստանձնած է մարդկային յարաբերութեանց մէջ, եւ երբեմն, իբրեւ նուիրական նիւթ, խիստ մեծ կարեւորութիւն մը ստացած էր:

Հին ատեն, մասնաւոր երկիրներու մէջ սովորութիւն կար ձրիաբար աղ լաշխելու այն ընտանիքներուն, որոնց անդամներուն թիւը 12ը կ'անցնէր: Այն ատեն երկրին բնական բերքերը միայն աշխատողին կը բաւէին, դրամը հազուադիւրէն էր եւ աղը անհրաժեշտ պէտք մը դարձած էր կերակուրներու պատրաստութեան համար:

Տան տիկիները կամ աղախիները մեծ խնայողութեամբ եւ զգուշութեամբ կը գործածէին աղը, եւ երբ պատահմամբ այդ համեմէն մաս մը գետին թափէր, մօտաւորապէս զժախտութեան կը վերագրէին զայն:

Աղի փոխադրութեան սահմանուած գերիններն ալ մահուամբ կը պատժուէին եթէ երբեք գետինը աղ թափելու աններելի սճիւրը գործելու յանդգնէին:

Աղ ու հացը հիւրնկալութեան խորհրդանշաններ են, մի եւ նոյն ատեն բարեկամութեան դաշինք մը: Աղամանը թափել ասպնջականութիւն մերժել կը նշանակէ, հետեւաբար մէկու մը թշնամի ըլլալ ըսել է:

Տակաւին մինչեւ այսօր, երբ բարձրաստիճան անձնաւորութիւններ որ եւ է տեղ մը ժամանեն, աղ ու հաց կը մատուցուի անոնց:

X

Մեկու մը մկրտս, զմեզի կամ դանակ նռնել:

Ժողովրդական այս նախապաշարումը կը կայանայ իբր նուէր ստացած մկրտին, զմեզին կամ դանակին փոխարէն դրամ հատուցանելուն մէջ:

Կ'ըսեն թէ, նմանօրինակ նուէրները կը խզեն բարեկամութիւնը: Անոնց փոխարէն դրամ տալ, առուտութիւն կը նշանակէ, որով նուէրը գնուած առարկայ մը կ'ըլլայ եւ բախտին չարքը կ'անհետի:

Կան կարգ մը պարագայներ ալ, որոնք կը կարծեն թէ մկրտաւ մը բերանը բանալ գոցելը տուելին մէջ վէճ կամ կռիւ կը յարուցանէ: Ասիկա արդարեւ արուեստը գաղափար մըն է:

ՀԱՆՔԵՎՅՑ ՏԵՐՈՍԿԻ

ԶԱՐԴԱՐ ՏՈՒՑՈՒԻՆ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՐԹԱԼԸ

Ա Լ.Ա. ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԻԱՆ

Ինչպէս գիտէք, ամէն եղանակ իրեն յատուկ արդուզարդը ունի, հետեւաբար չկայ շատ թէ քիչ (քանակը թէեւ կարեւորութիւն չունի) կարողութեան տէր ընտանիքի գլխաւոր մը, որ եղանակին համաձայն՝ իր հաճոյսով կէսին, ու անոր արտադրութեանց արդուզարդի, հագուստի, կօշիկի, հովանոցի, գլխարկի այլովքն հանդերձ. հոգը ու մտմտուքը չունենայ, որոնք անպատճառ պէտք է ըլլան, եւ որուն մէկ պակասը ամէն ինչ կը պակսեցնէ ընտանեկան յարկէն, այսինքն սէր, համերաշխութիւն եւլն. հոգ չէ թէ տանը գլխաւորին կոնակի չսրեքամեայ բալթօն բոլորովին գունաթափ եղած է. թերեւս ամէն տարի մի եւ նոյն գոյնով հասարակութեան չը ներկայանալու դիտաւորութեամբ:

Ահա այսպէս Զաքար աղա, որ համեմատ խանութպան մըն էր, ըրած էր այդ մասին իր կնոջ ու երկու տատրակուհիներուն, ինչ որ կրնար ընել հարուստ վաճառական մը իրեններուն, թէպէտ եւ ինք ամէն երեկոյ, երբ չուկայէն տուն վերադառնար՝ անպատճառ գուլպաները կը փոխէր: Ինչու որ խեղճ մարդուն ստեղծը ամէն օր մինչեւ իրիկուն պահ ջուրի պանեօ կ'ընէին իր եամայաչատ ու ծակարագում կօշիկներուն մէջ, ըստ վերջին ջրարութիւն դրութեան:

X

Կիները իրենց արգուզարդը ցոյցագրեքու համար ամէն դիւրութիւն ունին ամառը, քանի որ իրենց առջին բաց են պարտէզներ, դաշտեր, մարգագետիններ եւլն. նոյն իսկ պան կրպնր տաքիւր հանապազօրեայ պարոյտներ, որոնք շատ անգամ կարծուկ գիշերներուն մինչեւ հաւախօսը կը տեսնեն, սակայն ձմեռը բոլորովին կը տարբերի ու կը սահմանափակուի սալօններու ու միսափիւր օտաւ սրներու մէջ, ահուններու տօնախմբութեանց ու բարեկենդանի առթիւ, քայց եւ այնպէս

շատ ընտանիքներ ալ կը զրկուին երբ չունենան տօնեղի անուններով ազգականներ ու բարեկամներ, եւ յետոյ, եկեղեցին, ուր կը դիմեն մեր կիները իրենց արդուզարդին ամէն կատարելութեամբը, իրր թէ մրցում մը կազմակերպուած ըլլար:

Մեծ պահքը, որ օր է աղուհացից ու միսրոց, փոխանակ աղուհացի, կուտենք՝ ինչ որ չենք ուտեր բարեկենդանին, ու փոխանակ գլուխնիս մոխիր ցանելու ու ապալխարհելու, մեր կիները գլուխնին կառնեն մէկ մէկ չիչեք քապրաւի, եւ քանի որ օդերը հետզհետէ կը տաքնան, իրենց ձմեռուան արդուզարդին վերջին խրդը ցուցադրելու համար կերթան եկեղեցի Արեւադալի երգեցողութեանց ներկայ դտնուելու պատճառարանութեամբ:

X

Զարդար տուտու, որ բնաւ պատեհ առիթը չէր փախցներ իր աղջիկները ցուցադրելու, առաւօտ մը կանուխ կելլայ ու Զաքար աղային:

— Քա մարդ, ասոր մեզի քանի մը փառայ ձգէ ժամաւ համար, դէրէ միտք ունիմ ճահիլները ժամ Արեւուկայի տանիւ, հէմ հիչ չէ նէ վրանուն կլոխուն ըրած անխաւար մասաքիֆներուն. աճին կը հանենք, ինչու քիմ, չինամ ֆիստաննիս տահա տանախ երկու անգամ կունակին անցուցին, մէյ մը խաթուսին ժպի կային, մէյ մըն ալ սառէր է Մուսուհանտին իբնեհի դիշերը էսկիծի Գապար աղայէնց. գուվարիկն գացինք նէ, իշտէ կէօրիւպ կէօրէճէյին պաւ օլտուն, հէմ կիւսցած ըլլաս ալթըլս ֆիստաններուն մէվսիմըն ալ կասնի կար...:

— Եյ աննատըդ պէ գարը, սապահլայըն ափնա լաֆ էթթին հա, էս անճուխ ասոր պաֆօնիս կուսը կը պունեմ, աս չարթու վալ անցիք տէ, կալ շաթթու կացէք:

— Վո՛ւյ չէ՛, ըլլալիք պան չէ մեղայ,

ինչ ընես ընես պիտոր ասոր մութլախ Արեւելակալի պիտի էրթանք, չիւնքի խօսք տուած էմ, հէմ կիտցած ըլլաա գործին մէջը պաշխա պան կայ քիմ սողրամտամ կը հասկնաս:

— Ի՞նչ պաշխա պան է ատ չըսես նա յիմ, էս աս տունին մենծը չե՞մ, ետտիի նանէէ պագ:

— Քա ճանըմ պաշխա պան կ'ըսեմ նէ, պաշխա պան չը հասկնաս, կայնէ քիմ ըսեմ, սա վուր է Գոսպարին զուգարէին մէջ նա զիքճէ ճահիլ մը կար քիմ Անժէլիա հետ շատ խաղած նէ, իշտէ ան տղուն մարը Մարեէնէ տուտուն հետ սանկ ուռումիզ տէն խապար ըրեր է քիմ, թող աղջիկները ասոր ժամ Արեւելակալի պէրէ տէ տուրս էլլալիքէն աղէկ մը սանկ տիշարըխնալ տեսնամ աէի, հասկցա՞ր հիմա:

— Ի՞նչ ըսիր քա, չօճուխները տրսէվէ էղերէն քի նայեցունեղու պիտի տանիս:

— Քա չէ ճանըմ չը հասկցար, տըշարըլի կ'ըսեմ նէ տրսէվէ չէ, տուրս էլլալուն կըստոյին, քալուածքին կ'ըսես, հէմ ինծի նայէ, ատանկ կընիկճէ պաները քու կիտնալիք պաներդ չէ, էս ինչ կ'ըսեմ կոր նէ դուն ան ըրէ, մէզի ժամու փարայ տուր:

Ձաքար աղա գիտակ իր կնկանը տնկածութեան, առտուանցով չարը մարելու համար քովը ունեցած ութը մէթալիկը կնկանը ձեռքը թխմելով՝ կծիկը կը դնէ տունէն:

Ձարդար տուտու, շուրջ երկու ժամէն, ըստ պատշաճի արդուգարդը լմնցնելէն վերջ, առջեւը ձգած չիֆթ մը խուսիւնները, գոգոռ գոգոռ ուղղակի եկեղեցի կերթայ, Մարեէնէ տուտու, որ կէս պաշտօնական միջնորդի դեր կը կատարէր, արդէն հոն իրենց կըսպասէր ու անմիջապէս մօտենալով.

— Աս վուր մնացիք հոգիս, վախճայ քիմ չի պիտի կաք տէյի, մենծ տողի մէջ էի, քիչ մը առաջ տղան հոս էր ամա, բափօռի պիտի հասնի տէյիմ կընաց, տղուն մարն ալ իշտէ կեցած է սա առջեւի քանաբային ծարը, հիմա էրթամ տէ էկած ըլլալնիդ խապար տամ քի տիխաթ ընէ:

Նոյն միջոցին դրացի կին մը մօտենալով.

— Պարի լուս Ձարդար տուտու, քա մեղայ քիչ մընաց չի պիտի ճաշնայի, աս ինչ խըտար տէյիշ տօխուշ էղեր էք, թու թու

թո՛ւ, նազար չառնեն աղջիկներդ, ֆիտան տառճեր էն, ինչ ըսեմ, հէմէն Աստուած մուր ծեռօք պահէ տէ խայրըլը խամէթներ տայ, զէրէ քուրուկ, հիմակուան վախիթը բէք զօռ էղաւ շնորքով խըսմէթ մը կըտնալը, իշտէ օւթան է Սողոմիկին փեսան, թօհաֆճի թիւճճար է տէյի տուին, տակէն քէօշէյի ախտէր էլաւ, պարէ ուղուռին կիւզէլիմ Յըշիճի սօխախիին իրէք օտալը տունն ալ չը ծախէին նէ, հէմ եօխ կինին, էսսուռնուհինգ օսկի, քիմ բիթիւնը մէկէն ախտէրին աւուճը լեցուցին:

— Իրա՛ւ կ'ըսես քուրուկ, վա՛խ վա՛խ վա՛խ, էյ մէղքըցայ նէ, մեղք կիւզէլիմ աղջկանը:

— Հէմ կիտե՞ս, ամէն պանին վէրիդին ամէն գիշեր կը խըմէ տուն կուգայ, իքիտէ պիրտէ տէ էրկան թաթիկութիւն կընէ:

— Էյ մեղայ քիմ ատանկ մարդուն աղջիկներու թռնախը պիլէքիմ կը ցուցունեմ: Քուրուկ, ինչո՞ւ առաջուրնէ աղէկ չը հարցուցին չը փնտռեցին:

— Մ'ըսէր քուրուկ մ'ըսէր, զաւալըները հիշ խապահաթ չունին, ան Մարեէնէն կայ եա Ասծուծմէ կտնայ հէմէն, կընաց էկաւ, կընաց էկաւ զաւալըներուն զէյնը չէլմիլ ըրաւ:

Այս խօսքին վրայ Ձարդար տուտուն գոյնը նետեց ու վրան կէս մարելիքի պէս բան մը եկաւ, քանի որ իր գործն ալ Մարեէնէ տուտուն հետ էր, սակայն քիչ մը էսկի մատէն ըլլալուն ինքզինքը բռնելով ու բան մը յայտնի չընելով.

— Ինչ ըսեմ, ծակ ծակ ծակճըկին հէմէն ատանկ լեզուները քիմ, էլին ճահիլնեւուն կըլծի կրակը կերէն, ինչ է քանի մը խուռուշ պիտի առնեն տէյի:

×

Արդէն Արեւագալ եւլն. ամէն ինչ լմնցած էր, ու դեռ մեր տիկիները իրենց խօսւրուտութիւնը կը շարունակէին, երբ քահանան ւօրհնեալ եղբորութեամբ կ'ըսէ ու օրիորդները դառնալով իրենց մօրը՝ հայտէ մայրիկ երթանք, ժամը մարդ չը մնար կոր, կ'ըսեն:

Ձարդար տուտու սթափելով՝ քա աս ի՞նչ է ժամէն էլան քի, քա վա՛յ մեղքիս,

խօճաման Արեւելայը լարտեցին ընցուցին, ըսելով՝ առջին կը ձգէ խուճիկները ու տուն կը դառնայ, միտքը դնելով սակայն Մարեէնէին հետ գործ չունենալ:

Հետեւութիւն.

Երբ ապրանք մը աչքէ ելլայ՝ շիտակ մէ-
զաթ կ'երթայ, քանի որ մեր աջիկները
յարգի են՝ ինչո՞ւ Մարեէնէներու ձեռքով
մէզաթը կը հանենք ու վերջն ալ կը գղջանք:

Մնամ

եղած տեղս

ԵՐՄՈԳ

ԽՆԴԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՒԱՔՈՒԱԾ ԽՕՍՔԵՐ

Երկու սերտ բարեկամներու միջեւ.

— Կրնամ պարծենալ թէ երբեք մէկը
չեմ բամբասած:

— Օ՛հ, այդ շատ ստոյգ է, որովհետեւ
միշտ քու վրադ կը խօսիս:

×

Դազինօի մը մէջ.

— Կարսօ՛ն, այս ի՞նչ գինի է որ բերեր
ես:

— Ամէն օրուան խմած գինինիդ է պա-
րոն:

— Ամէն օրուան խմած գինինիս ասանկ
պղտոր է:

— Ա՛հ, հասկցայ պարոն, յանցանքը
մերը չէ, անձրեւոտ օրեր աղբիւրին ջուրը
կը պղտորի անկէ է:

×

Ճաշարանի մը մէջ.

— Ինծի նայէ, կառսօ՛ն, այս բերած
ապուրդ բոլորովին պաղեր է:

— Կը սխալիք պարոն, բերած ատենս
չրակի պէս էր:

— Ինչէ՛ն գիտես, համը նայեցա՞ր:

— Ոչ, մատս մէջը խօթեցի միայն:

×

Ինծի նայէ բարեկամ, ալ բոլորովին ա-
պաքինած ես, հիւանդութեան հետքը չմնաց,
բայց նորէն կ'ըսեմ, կաթիլ մը օդի դրիւր մի
բերանդ, ոտքերդ տնկած օրդ է:

— Ա՛հ, պարոն բժիշկ, ինչ օգուտ ա-
նանկ է նէ ապաքինիլս:

×

Փոքրիկ Յակոբ լսելով հօրը սպառնալիքը
որ իր մօրը ւ քեզ պատուհանէն վար կը նե-
տեմ, կ'ըսէր, մօտեցաւ մօրը եւ ըսաւ.

— Մի վախնար մայրիկ, անցած օր կա-
տուն ալ վար նետեց, բայց լսան մը չեղաւ:

×

Երեկոյթի մը մէջ պճրասէր տիկին մը կը
ջանայ կարելի եղածին չափ ինքզինքը երի-
տասարդ ցուցնել:

Խօսակցութեան մը պահուն իր փոքրիկ
տղան կուգայ եւ քսան փարայ կուզէ:

— Ի՞նչ դրամի է նորէն, անառակ, ա-
մօթ է:

— Պարտքդ է, չի տա՞ս:

— Ի՞նչ պարտք:

— Վա՛յ, ի՞նչ շուտ ալ մոռցար, հոս չե-
կած՝ տունը գլխէդ քսան հատ ճերմակ մազ
չքաշեցի՞, հատին մէկ փարա չպիտի՞ տայիր:

×

Բժշկական վարժարանի մը մէջ քննու-
թեան պահուն.

— Պարոն, սիրտդ ո՞ր կողմն է, ցու-
ցուր:

— Չեմ կրնար տեսար:

— Պէտք է ըսես, ասոր մէջ չըսելիք ի՞նչ
կայ:

— Աղաւնիին կողմն է տեսար:

×

Դարձեալ նոր գօրսէս անյայտացեր է,
տարակոյս չունիմ որ սպասուհին գողցած է,
կ'ըսէր տիկին մը իր ամուսնոյն:

— Մարիամը ատանկ բաներ ընող աղջիկ
չէ դուն ալ:

— Նաւրջ չէ: Անցած տարի շապիկներս
սնտուկէն չհանեցի՞:

— Կեցիր նայիմ գօրսէս ի՞նչ պիչիւմ էր:

— Սա մատամ Զմիթէն առածս, կարմիր

ժապուէններով: Անչէ ամա ինչո՞ւ կը հար-
ցունես կոր:

— Անոր համար որ իրիկունը Մարեամին
հանած ատենը նայիմ, եթէ քու ըսած զօր-
սեդ է նէ առնեմ ճեյի ... (սխալը հասկը-
ցաւ, բայց ուշ):

X

— Վերոնիկ, պարահանդէսին մէջ ըրա-
ծող վայելց:

— Ի՞նչ ըրի որ:

— Ի՞նչ պիտի ընէիր, ան խարտեաչ ե-
րիտասարդին հետ ելար ինկար:

— Ատկէ ի՞նչ կ'ելլէ:

— Ինչ կ'ելլէ մի՛, իմ էրիկութիւնս ո՞ւր
կը մնայ ալ:

— Հոգ մի ընէր անուշիկս, քեզի համար
հայրիկս է ըսի:

X

Երկու բամբասող կիներու միջեւ:

— Հսեցի՞ր, Մարիամ տուտու, խաչիկին
աղջիկը մանչ մը բերեր է:

— Քա ի՞նչ կ'ըսես դուն ալ Հոռոք տու-
տու, կարգուելին վեց ամիս անճախ կայ
նէ:

— Է ամա, սանքի երեք ամիս ալ նշա-
նած ճնացին, հիսապը նորէն քանաւ է:

X

Երկու ծերուկներու միջեւ:

— Այսօր օգը շատ գեղեցիկ է, կամաց
կամաց մինչեւ Պալըզը պտոյտ մը ընենք:

— Վազ անցիր դուն ալ, քիչ մը ժամա-
նակ ալ սպասէ կառքով կ'երթանք հոն:

X

Դատարանին մէջ:

— Ամբաստանեալ դրացիդ խոտի խուր-
ձերը գողնալու ո՞վ մղեց քեզ:

— Կովս, տէր նախագահ:

X

— Ի՞նչպէս հասկցաք թէ խոհարարնիս
փոխած ենք:

— Ուրիշ ատեն ապուրիմ մէջէն կարմիր
մազ կ'եղէր իսկ հիմա սեւ:

X

Նորապսակներու միջեւ:

— Սիրելի ամուսինս, արդեօք զուն ալ
շատերու նման ամուսնական կեանքէ շու-
տով պիտի ձանձրանա՞ս:

— Ամենեւին, հոգիս, ամուսնական կեան-
քը այնքան կը սիրեմ որ եթէ վաղը մեռնիս,
միւս օր կրկին կ'ամուսնանամ:

X

Թատրոնի մէջ օրիորդ մը բերանը խոչի
բանալով կը յօրանէ: Քովը նստող պարոն
մը զայն ծաղրելու համար:

— Ահ, օրիորդ կարծեցի թէ զիս կ'ըլլու
փափաքը ունեցաք պահ մը առաջ:

— Ոչ պարոն, պիտայի տակառ կ'ըլլու
սովորութիւն չունիմ:

X

Սափրիչ մը պարոնի մը մազերը կտրե-
լէն ետք հայելի մը ձեռքը տալով:

— Շնորհքով կտրուած ե՞ն, պարոն:

Մարդը նայելէ ետք:

— Շատ կարճ կտրեր ես, քիչ մը երկար
կուզեմ:

X

Մուրացկան մը հարուստ պարոնի մը:

— Պարոն, պարոն, կը խնդրեմ տասը
փարա:

Մարդը ձայն չի հոնք:

— Դուն Գրիստունեայ չե՞ս մարդ Աստու-
ծոյ, կը պօռայ մուրացիկը:

— Քեզմէ աւելի պարոն, որովհետեւ ես
չեմ ընէր ուրիշներուն այն բանը զոր չեմ
ուզեր ուրիշները ինծի ընեն, այսպէս ես
չեմ ուզեր որ ինծի ուղորմին:

XXXXXXXXXXXXXXXXXXXX

ՅԱԶՈՐԴ ԹՈՒՈՎ

ԽԱՐԱԴՐԱԿԱՆ Տ. ԷԼԻՋ ՀԱՃԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ՍԱՔԱՅԵԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ
Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ ԼԵՒՈՆ
ՆԵՐՇԱՊՈՒՀ ԵՐՄՈԳ
ԵՒԱԹԼՆ ԵՒԱԹԼՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՒՏԱՐ . — Մարտ 1 ի գիշերը տուններու պատուհաններու տակ սլքալկացող ֆուխէ բայթօլը միւսիւ մը , աւուր պատշաճի նետուած « Mars իշերի բիրե սիշարըրի ճաթած աղտոտ չէօմլէք մը կերեր է գլխուն :

Ծ. Խ. — Կը յանձնարարենք այդ միսիսին ճաշարանապետ ֆուխէփ աղաւէն չէօմլէկ քէպապի մը ուտել , չէօմլէկէն կրած փնասին վրէժը լուծելու համար :

ԲԵՐԱ . — Օրիորդները օդ առնելու պատրուակին տակ սկսան ամէն իրիկուն Բերայի երկայն ճամբան չափ չըփել :

Ծ. Խ. — Այդ օրիորդները թիւնէլին գլուխը ի՞նչ բան ունին :

ՊՐՈՒՍԱ . — Այս օրերս վարունգի և դրոշմի մշակութիւնը ամենայն փութկոտութեամբ յառաջ կը տարուի : Հետաքրքիր ենք գիտնալ թէ , վարունգի տունկին վրայ եթէ գդում պատուաւորութի , կամ դգումի վրայ վարունգ պատուաւորութի , արդիւնքն ի՞նչ կ'ըլլայ :

Ծ. Խ. — Ատոր պատասխանը Իդմիրի «աճպարար» բառին ստուգարանութիւնը լոյս տեսնելէն վերջը միայն կարելի է տալ :

ՍԿԻՒՏԱՐ . — Աստուական ետիսայով պարոնէն կը խնդրուի որ քիչ մը աւելի քաղաքավար ըլլայ և տեղի չտայ կիրակի օրուանին նման յանդիմանական դասի մը :

Ծ. Խ. — Կը խրատենք այդ պարոնը իրեն չվերաբերած դործերուն չի խառնուիլ եթէ չուզեր դաս մըն ալ առնել :

ԻՉՄԻՐ . — Ահա՛ նորէն զուարճալի գիւտ մը և միանգամայն յայտնութիւն մը ծածուկ սէրերու : Ինչպէս միշտ նոյնպէս այս անգամ qorsosն կերթայի պիսիֆեքով : Հեռուէն կապոյտ պահարանով բան մը տեսայ , կայնեցայ , վար իջայ , առի , բացի , կարգացի և Ձեզ կը զրկեմ : հրատարակելու համար :

Ծ. Խ. — Այդ համակը մենք ալ կարգացինք և աւելորդ համարեցինք հրատարակել զայն , վասն զի համակագիր օրիորդը երբ մէկ կողմէ կը պարծի թէ՛ ինք գոյժէ մը չըջանաւարտ ըլլալուն առանց դրամօժիտի պիտի ամուսնանայ , միւս կողմէ համակին մէջ բառ մը իսկ անսխալ չէ կրցած գրել : Եթէ ամուսնանալ կը փափաքի , դրամօժիտը օր առաջ պատրաստել թող նայի :

ԳԸԼ-ՊՈՒՐՆՈՒ . — Տեղւոյս բնակիչներէն վերժին և թէֆարիկ առջի օր ծեծեցին կօշկակար Հայկին կինը Մաքրուհին , որ յի բլալով վիժում տեղի ունեցաւ :

Ծ. Խ. — Ֆէմինիզմի հաւատարիմ պաշտպաններն են եղեր անուշահոտն թէֆարիկ և երկայն թաթիկն վերժին : Արդարեւ այդ մարդիկ ծեծկուռքը իրենց միայն սեփականելու ի՞նչ իրաւունք ունին : Ֆէմինիզմ , ֆէմինիզմ , միշտ յաղթանակը քու կողմդ է :

Յաջորդ թուով նոր բաժին մը պիտի բանանք Հանրագիտակի մէջ , ուր ժամանակագրական կարգով , երգիծաբան գրողներու ընտիր կտորներ տեղ պիտի ունենան : Կը յուսանք թէ «Հանրագիտակի» ընթերցողները հաճոյքով պիտի կարգան նախորդ սերունդներու երգիծաբանական էջերը :

ՕՔ ՆՈՔ

ԼՈՒՔ ՆՈՔ

ՈՏԱՆԱԲՈՔ

Եռաձայնն ահա օրումն է խրնդիր
 Զորն է կը ճառէ ամեն լրագիր
 Ունեմ կը գովեն, այլ կը պարսաւեն
 Աւեմ կը կարծեն թէ խօսին գիտեմ:
 Ի՛նչ աղուր, սիրուն սօքաւ ալօ
 Բէ, քա, սօ, լա, սի, լա, սի, քա, րէ, so:
 Իզմիրեն անցաւ ան Ասաքաւ
 Փառք սակ կը շառաւ եւ ոչ մէկ նագար
 Հասաւ Հալաքիս, անկէ ըրաւ չու
 Որ տոսիկ տոսիկ երթայ Գուլ-գաբու:
 Զիյնիկիրեանով ըսկըսեալ արդէն
 Մեհեհեհեհեհ վարպէտ փորձէ լրջօրէն,
 Երկու տիրացու ահա դէմ դիմաց
 Զերթ ախոյեաններ աշխոյժ են կեցած:
 Առաջինն մարգեց դրպիրներ երուն
 Երկրորդը սակայն մարգէ ճիշդ ուրուն:
 Ասեց երունը պիտի ըլլայ մանչ
 Յիսունն ալ աղջիկ սիրուն փափկաշանչ
 Ասեմ ամենքը բոլորովին վարժ
 Պիտի ընեն անշուշտ լրտողն հոգեշարժ:
 Ով որ ուրեմն է եռաձայնաւոր
 Աւագ Հինգշաբթի արտով մ'անհամբեր
 Հալաքիս փութայ քող լրտել երկրորդ
 Եռաձայնաւոր պատարագ մը յորդ:
 Իսկ երկու շաբաթ վերջը Հասիկեն
 Մեհեհեհեհեհին խումբ գոր կը պատրաստեն
 Գուլ-գաբուի մեր Մայր եկեղեցին
 Պիտի տայ իր փորձ, փորձ մը առաջին:
 Յուսեմ երջանիկ մի յաջողութիւն
 Պրակե արդեաւք վարպէտն անփուն:

X

Կէս մը նորութիւն չի՞ համարուիր սա
 Արեւագալը, որ կերգեն հիմա
 Գրեթէ ամեն եկեղեցիներ
 Մանչ աղջիկ խառնը իրարու ընկեր:
 Այ ժամն հասած է պէտք է հրաւեր
 Որ սեղան ելեն աստիճանահներ,
 Այն ասեմ մեր իդան կատարեալ կրկայ
 Բազմութեամբ տաւար կը լեցուի կերթայ:

X

Կէլիպօլուէն նոյնպէս Խաբերդէն
 Յաւալի շուրեր հասած են արդէն
 Թէ դաւանափոխ հայ ֆահանգներ

Բարոյիկութեան հիմակ են յարեր:
 Այդ շրնորհունակ չը ֆահանգներ
 Հաւ է որ մեզիկ երթան հերուներ:
 Հայ-Հոռեական Պատրիարքարան
 Հոս մեզ, լա կ'ընէ թէ պատուոյ փոխան
 Մերժէ ընդունիլ ու չի տայ երես
 Զի տրեք կողմ չուզէ ինք այնպէս:

X

Հաճոյքով տեսնել Մասիս գրական
 Այնքան շահեկան թերթ շաբաթական
 Որ հրատարակուի պիտի լոս առաջնոյն
 Ինչպէս վեց տարի լեզուով մը սահուն
 Կը մաղթենք իրեն փայլուն մի շրջան
 Յոյնաճանաչով չի միջոց բարոյական:

X

Վարչութեան Խորհուրդն Դասասանական
 Որ կը գումարուի Պատրիարքարան
 Տըւաւ որոշում անցեալ Ուրաք օր
 Ամուսնաշուկան, որ չէր անսովոր:
 Կրկնամուսնութիւն արտօնեց իկնոյ
 Ամուսնոյն նոյն քան մերժեց բարձրագոյ:
 Սամաքիացի եր Գալոքեան Սուրբիկ
 Որ երկանը հէտ չէր ըրած տըրփիկ:

X

Խառն Ժողովոյն նիստին մեջ վերջին
 Հոգաբարձութեան Հիւանդանոցին
 Իբր արժանեցիկ կարգեցաւ անդամ
 Գիտնական տօքթօն Խորհուրդեան Վահրամ:

X

Մայրն Որքանոցի Գալփայեան աղջկանց
 Մայրապէտն համեստ, տնոյն աննախանձ
 Դեպ յերուսաղեմ՝ հենն առած մի ֆոյր
 Ուխտաւեղերու կերթայ ի համբոյր:

X

Ռումանիայէն շուր գալ անվայել
 Թէ Հայեր չուզեն հովուի վրձարեղ
 Ամսական գումար եւ կը խնդրեն որ
 Պատրիարքարան՝ քեզ անսովոր,
 Ինք ապահովէ հոգեւոր հովուին
 Պիտի ընեն նիւթական եւ, ամբողջովին:
 Այն հաշտով երթիք Ռումանիոյ Հայեր
 Պիտի չունենան եւ ոչ իսկ տէրեր:

Արտօնաւոր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

Պատը այի ճատտուի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՄԵՈԻՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անհրապէս մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆատներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անշուքական կազդուորիչ գեղը, գնահատուած համբաւուոր բժշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր գեղարաններու և գեղորէից մթերանոցներու քով:

50—33

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԱԾԱԲՆԱԾ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Զանաւ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանք տոկոսութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմով յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և գիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է: Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—27

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ զնասարկար կար նիւթերէ բոլորովին զերծ է:



Թիշեալ ջուրը մաշերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են, սակէ, զատ Ճերիտի վեգաթի Թըլպայիէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապաւորելի ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշերը, զգուշացէ՛ք այս կարգի ազտու ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուր ու զուտ ստանալու համար գիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէպի, թիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեան վաճառատունը, որ պիտի զընտէք մաքուր ջուր ձեր մաշերուն գունաւորման համար:

Զգանաւորարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Զգանաւորարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէքճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, քրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ՝ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու ոնձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական զորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէքճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէքճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-23

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։